

ՄԵՐ ԳՐԵՐԻ ԹԻԻԸ ԻՆՉՈՒ ԷՐ 36

Ղ. ԱՂԱՅԵԱՆՅԻ

Պակաս գրեր ունենալը և, իբրև ալդ պակասութեան հետեանք, մէկ գրին մի քանի հնչիւն չատկացնելը մի բնական երևութ է գրերի նոր հնարած ժամանակ, որովհետեւ ոչ մի գիւտ ծնունդ չի առնում իւր հասուն և կատարեալ վիճակի մէջ, կատարելութիւնը մի տճեցումն է ժամանակի ընթացքում, թէև, զժբախտաբար, շատ անգամ էլ եղած անկատար գիւտը քարանում, մնում է անշարժ հանճարաւոր լատնագործողի խաւարամիտ չեանորդների շնորհիւ Գիւտը մի մտաւոր ծնունդ է և ունի իւր չղութիւնը՝ Գիւտ անողը առաջ չղանում է անելի գիւտով և չետոյ չալտնագործում, ծնում։ Ամուլ մտքերը ոչ միայն գիւտ անել կարող չեն, այլ և ոչ իսկ ըմբռնել կարող են եղածի նշանակութիւնը։ Գտնել կարող է միայն որոնողը, եթէ միայն գտնելի է որոնածը, իսկ եթէ ոչ՝ նա կարող է և ցնորամիտ լինել։ Ուղիղ ճանապարհով գէպի գտնելի առարկան գիմելը, գըտնելու չափ արժէք ունի, որովհետեւ ղորանով կիսով չափ կը հարթէ ապագալ որոնողի գործը։ Այսպէս մէկը ցոյց կը տալ ուղին, միւսը կը ղտնէ, երրորդը կը կատարելագործէ։ Բայց թողենք այս միջանկեալ գատողութիւնը, և դառնանք մեր զլխաւոր առարկային։

Ասացինք, որ բազմահնչիւն գրեր ունենալու պատճառն այն է, որ ալբուբենի մէջ չեն լինում ալնքան գրեր, որքան որ լեզւի մէջ հնչիւն կալ, բայց թնչ բանի պէտք է վերագրենք մի հնչիւնի համար երկու, երեք եւ աւելի ևս գիր ունենալը, թնչ հարկից են ստիպւած լինում ալդ բանն անելու։ Ինչո՞ւ համար, սրինակ՝ վրացոց գրերի մէջ կան երեք հօ և երկու խէ իրարից անտարբեր հնչիւն ունեցող, ինչո՞ւ մենք մէկ չը հնչիւնի համար գործ ենք ածում երկու գիր և և Վ։ (Նոյնահնչիւններ կան և սլաւոնական գրերի մէջ։ Մեր խօսքն չալտեղ այն գրերի մասին չէ, որոնք ժամանակի ընթացքում կորցնում են իրանց նախնական ձայնը եւ նոյնանում մի այլ հնչիւնի հետ, և ոչ էլ այն գրերի, որոնք մէջ են բերւում օտար

բառեր գրելու համար, և որոնք նույնպէս կորցնում են իրանց ձայնը և նույնանում մի ալլ գրի հետ)։

Վրացիք իրանց նոյնահնչիւն գրերի ծագումը գրերի թւագրութեան պաշտօնի ազդեցութեան են վերագրում, և ալս պատճառով էլ նրանք իրանց աւելորդ գրերն արտաքսել են նոր զրականութիւնից, ապացուցանելով, որ դրանք աւելորդ են եղել նոյն իսկ գրոց լեզուում, խուցերէնում։ Այս բանը հաստատում է և պոետֆէստոր Չուքինովը իւր բառարանում, ասելով՝ թէ հնումը արաբական սխտեմի թւագրութիւն չկար, ալս պաշտօնը տեւել էին գրերին աշխարհի սխտեմով, որի համար պէտք էին 37 գիր, և որովհետեւ լեզուի մէջ աղջքան հնչիւն չի եղել, ակամայիցս աղթիւր լրացրել են միևնոյն հնչիւնի համար մի քանի գիր հնարելով։

Թէ գրերի թւագրութեան պաշտօնը մեծ ազդեցութիւն է ունեցած յղրերի թւի վրայ, ալս նոր բան չէ։ միայն առանձին ուսումնասիրութեան նիւթ չի դարձած, ալս հանգամանքի վրայ ոչ ոք չեշտած չէ։ Այս իսկ բողոքիս, երբ ալս նիւթը հետազօտելու վրայ եմ, Բուսլայիւի պատմական քերականութեան մէջ տեսնում եմ ասեւած, որ սլաւոնական ղէլօ գիրը միայն թւագրութեան համար է գործ ածել և բառագրութեան մէջ չի մտել մինչև տասներեքերորդ դարը։ Այս միևնոյն կարելի է ասել և վրացոց հօյ գրի մասին, նա ևս ոչ մի բառագրութեան մէջ մտած չէ, եթէ ոչ միայն սխալմամբ գուցէ, ալ վարել է իբրև տալիս հազար նշանակող մի թւանշան ¹⁾։

Այս հանգամանքից երևում է, որ բառագրութիւն և թւագրութիւն միաժամանակ չեն հնարում, նախ բառագրութիւնն է և ապա թւագրութիւնը։ Բառագրութիւն և թւագրութիւն ջոկ ջոկ պահանջներ ունին։ Բառագրութեան մէջ մէկ գիր կարող է մի քանի հնչիւնի պաշտօն վարել, օրինակ մէկ գիր կարող է վարել «, ա, ու, ձայների պաշտօնը, մի ալլ գիր՝ ե, է, է, յ ձայների, բայց մէկ գիր կարող չէր, ընդունած սխտեմով, մի քանի թւի պաշտօն վարել։ Եթէ մտքներումը զրեւ են վերջիւ գրի թւական արժէքը մինչև իննը հազարի հասցնել, ապա ուրեմն եթէ բառագրութեան համար գործածուող գրերի թիւը զրանից պակաս լինէր, պէտք է կամալ ակամալ նրանց թիւը մինչև 36-ի հասցնէին, թէկուզ դորա համար պէտք լինէր նոյնահնչիւն գրեր հնարել։ Եւ ալսպէս էլ արել են վրացիք, իսկ հայերը...

Մեր և վրացոց գրերը միաժամանակ գտնւելով և միասին կատարելագործելով մինչև նրանց բաժանելը մեր եկեղեցուց, փոխադարձաբար պիտի ազդէին միմեանց վրայ թէ բառագրութեան և թէ թւագրութեան

¹⁾ Եթէ պ. Սարգիս Սարգսեանին այս հանդամանքը յայտնի լինէր, նա չէր տեսնուած պատասխանում, Թէ մէկ հնչիւնի համար երկու գիր հնարելու կարիք չի եղել։

կողմանէ, ճշմարիտ է, մենք չունինք տասը հազար նշանակող գիր. մեր վերջին գիրը, որ է չէն, ինչը հազար է, բայց այս չնչին տարբերութիւնը կարող չէ հերքումն լինել վրացոց և մեր գրերի սերտ չարաբերութեան. Աւելի հաւանական է, որ նորանց վերջին հօդերը շատ լետով լինին ներս բերած և հէնց գուցէ այս է եղել պատճառը, որ բառագրութեան մէջ հուտք չի գտել. Վրացիք կարող էին գրել իրանց ին և չն գրերը, և դա կը լինէր տասը հազար, ինչպէս հալք գրել են ք և ու. Տասը հազարի համար մերոնք գործ են ածել և քիւր բառը, բայց սա աւելի շատութիւն ցուց տուող մի անորոշ թիւ էր. և ասելով ու գրելով էր բեր և ոչ բեր, որի պարսկերէնն է նոյնպէս բեր, իսկ վրացերէն բէլրի, որ նշանակում է բազում, շատ:

Մեր գրերի 36 թիւը և վերջին գրի ինչը հազարի արժէք ունենալը մի զուգահեռութիւն չէ, այլ գիտակցաբար եղած. 36 թիւն հասնելը և նորա վրայ կանգ առնելը երևում է սկսած գործի կիսակատար լինելուց. Եթէ 36 թիւը մի տեսակ սահման և կէտ նպատակի չը համարէին, այն էլ թւագրութեան շնորհիւ, գրերը կամ կաճէին աստիճանաբար և կամ նոյն թիւն չը հասած՝ կը քարանալին մի ստոր աստիճանի վրայ. Եթէ մենք իմանանք թէ արդեօք որ դարում են մեր գրերին թւագրութեան պաշտօն տւել, նոյն դարուց առաջ մեր գրերի թիւը 36-ից պակաս կը գտնենք, և պակաս կը լինին է, ի, յ և Վ գրերը, որովհետեւ նշաններ կան, որ այդ գրերը չեղած, արդէն կազմակերպւած գրականութիւն է եղել, առաջին երեք գրի տեղը բռնած է եղել ելը, իսկ վերջինի տեղը՝ լիւնը:

Հալկազեան բառարանի ասելով՝ Թրակացու քերականութեան թարգմանիչները դուրս են մղել Վ գիրը, նոյնահնչիւն համարելով լիւն գրին, բայց թէ ինչից ստիպւած կրկին ներս են բերում, այս մասին լռում է բառարանը: Մեզ անչափ լինելով բառարանի ունեցած աղբիւրը, չիմանալով նաև, թէ ստուգ երբ է թարգմանւել Թրակացին, քանի որ ապացուցւած չէ, որ Դաւիթը լինի եղած նրա թարգմանողը կամ նրա ընկերներից մէկը, մէնք այսու ամենապիւ կարող ենք վճռաբար ասել, որ Եթէ վեր բոլորովին դուրս մղէին, պէտք է մի՛ այլ գիր հնարէին, որ գրերի թիւը 36-ից չը պակասէր: Ուրեմն եթէ դուրս չեն մղել, պատճառը նրա թւագրութեան արժէքն է եղել: Այս էլ պէտք է ասել, որ դուրս մղելու չափ սահմանափակել են վեր գործածութիւնը՝ տասնըչորս տեղից միայն մէկ տեղ չափացնելով նրան:

Քիչ առաջ տեսանք, որ թւագրութեան համար հնարւած նոյնահնչիւն գրերը բառագրութեան մէջ չեն մտնում կամ շատ ուշ են մտնում: Այս միևնույն վիճակին ենթարկւում են և այն վերջնամուտ գրերը, որոնք իրանց նոյնահնչիւնը չեն ունենում, այլ ներս են բերւում բազմահնչիւն գրերի գործը թեթևացնելու համար: Սրա պատճառն այն է, որ երբ դրանք հնարւում են, այդ ժամանակ արդէն լաւ թէ վատ, սխալ ինչ ուղիղ, գոյու-

թիւն ունեցող բառակազմութիւն է լինում, հեղինակութիւններ և թարգմանութիւններ են լինում, և որ առաւելն է՝ կատարած է լինում արդէն Սուրբ Գրքի թարգմանութիւնը, որից ոչ մի տառ և ոչ մի կէտ փոխել ալլ ևս կարելի չի լինում: Զին գրեւոր սուրբ են համարում, նորերը՝ ոչ, Բնականապէս ալլ գրեւոր դեռ մի առ ժամանակ պէտք է միայն թւագրութեան պաշտօն կատարեն, մինչև հնութեամբ սրբանան, մարդիկ մոռանան նրանց նորութիւնը: Մուտք գտնելուց լետոյ էլ ալլ գրեւոր չեն գրաւում բոլոր իրանց սեփական տեղերը, ալլ շատ բառ մնում է նախնական ձևի մէջ կամ մի ալլ կերպարանափոխութիւն է ստանում: Երբ տեսնում ենք, որ ալլ կամ ալլ գիրը ալլ վիճակն է ենթարկած, առանց կասկածելու կարող ենք ասել, որ նոյն գիրը վերջնամուտ է: Ասածիս համար մօտիկ մամանակից մի օրինակ բերենք: Մեր օ գիրը ներս բերին, որ աշունհետ փոխանակ ա երկտառ գրելու, գրեն մի պարզ օ, բայց դրա դէմ օ գրին սկսեց մրցել, որովհետեւ ալլ գիրը արևմտաւորումը, լուծաց բաժնում և լետոյ Տաճկաստան դառել էր օ. չէին ասում մեզ պէս որք, որդի, ոսկի և ալլն, ալլ օրք, օրդի, օսկի և ալլն: Աշունհետ փոխանակ ալլ վերջաւորութիւնը չի ելու օ, գրեցին ալլ: Ինչից գիտենք արդեօք, որ ի սկզբանէ անտի մեր հին ուղղագրութիւնը հալոց մէջ ամենայն տեղ միակերպ է լաւա՞ծ գնացել, ինչից գիտենք, որ լուծաց բաժնում լուծական ուղղագրութեան աղղեցութեան տակ չէր գտնւիլ և պարսից բաժնում՝ պարսից, կարելի է հեշտութեամբ ենթադրել, որ հնումը միաժամանակ գրած երկու մասեանագրութեան մէջ մէկում ալլ ուղղագրութիւն լինի, և միւսում՝ ալլ. օրինակ մէկում է լինի, միւսում՝ եչ, մէկում Վ լինի, միւսում ա, մէկում, լինի, միւսում՝ ոչ, և ալլն: Ուզում եմ ենթադրել, որ գրեւոր կարող էին 36 լինել երկու տեղն էլ, և Յունաց և Պարսից բաժնում, բայց Պարսից բաժնում վերջնամուտ գրեւոր գործ չածէին բառագրութեան մէջ, իսկ Յունաց բաժնում գործ ածէին, մէկ տեղ գրէին՝ էի, էիր, էր, միւս տեղ եի եիրեր: Ահա ալլ տարբերութիւնը, որ հիմա էլ նկատում ենք, Գրէ Իսլ չէ, ինչպէս սովորութիւն են ունեցել մեկնելու մեր քերականները և իրանց խլաքով ուղղելու, ալլ վերջնամուտ գրերի չփոթութիւն:

Երբ նկատում ենք, որ մի գիր իւր հնչիւնը միայն բառասկզբում է գործ դնում, իսկ բառամէջում և բառավերջում՝ ոչ, մի ալլ գիր՝ բառամէջում և բառավերջումն է գործ դնում, իսկ սկզբումը՝ ոչ. դարձեալ մի ուրիշ գիր բառասկզբում և մէջում գործ է դնում, միայն վերջումը՝ ոչ, սրանից առանց սխալելու գալիս ենք ալլ եզրակացութեան, որ նրանցից մէկը վերջնամուտ է, և նա է վերջնամուտ, որի բաժինը սակաւ է, ալլնքն գրաւած տեղը քիչ է: Այսպէս վերջնամուտը եչը չէ, ալլ է, ոչ լիւնը՝ ալլ՝ վնը: Գրում ենք վան, իսկ հակադարձը՝ նաւ, և ոչ նաւ. սորա հակառակ գրում ենք նաւ, բայց ոչ ւան, ալլ վան, հաւ և վահ, հով և ոչ վոհ: Բառասկզբում ալլ գրում է, բայց վո՞ ոչ, և մենք չունինք ոչ մի բառ, որի

սկիզբը լինի զո՛ւ Թող հէնց ալս հանգամանքից տեսնեն աշկարա, որ մեր
 « գիրը ի հնուց անտի բառասկզբում եղել է « օ և ոչ օ ¹⁾), Վերջնամուտ և
 նուրբահնչիւն գրերի պատճառով մեր հին բառագրութիւնը բնականից շեղ-
 ւելով՝ արւեստականի է փոխւել։ Արւեստական է, օրինակ՝ գրել՝ «օ, ինչ-
 պէս առաւօտ և չը գրել հակադարձը՝ «օ. կարելի է գրել «օ, ինչպէս
 «օօ», բալց ոչ ոււ, ալսինքն ուլի Գրում էին տունջեան ե կարողում տուլն-
 ջեան, գրում էին սունու, ե կարգում սունլնու, գրում էին դունալ և կար-
 ցում դունլա, ալսպէս էլ նուէրենուլէր, նուազենուլաղ, և ալսն։ Ալսպիսի
 օրինակներ մենք կարող ենք շատ և շատ բերել, ապացուցանելու համար,
 որ վերջնամուտ գրերը բառագրութեան մէջ չնչին տեղ են գրաւել բալց և
 ուղղագրութեան մէջ չառաջ են բերել մի տեսակ արւեստականութիւն։

Հնումը ինչ եղել՝ եղել է, հինը ոչ շտկել կարող ենք, և ոչ նորոգել,
 սակալն գիտենալ պէտք է, թէ ինչ է եղել և ինչո՞ւ համար, որպէս զի ալդ
 հանգամանքից օգուտ քաղենք մեր նոր գրականութեան, նոր լեզու ուղ-
 ղագրութեան համար։ Մեզ հարկաւոր է մի պատմական բարեխիղճ ուսում-
 նասիրութիւն մեր հին լեզուի ուղղագրութեան, սկսած հինգերորդ դարուց
 մինչև մեր օրերը։ Այս բանը կարելի է անել միամտմանակ երեք կենտրոնում,
 Էջմիածին, Վենետիկ և Վեննա։ Ի հարկէ հետադօտութիւնը պէտք է լինի
 ամեն բարեխիղճութեամբ, ազատ որ և է տենդէնցիալից։

1) Այս հանգամանքի վրայ դարձնամ ենք համեմատական լեզուաբանական
 մաթ. ստորոտ պարոն Տոմոսի՝ բարեհաճ՝ ուղղագրութիւնը։